ԱՅՑ ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

(Հայ տուրիստի յիշողութիւններից)

ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆՑԻ

IV.

ՎԵՐԱԴԱՐՁ

(Նաբուռնակութիւն և վերջ [1])

Դեռ չէր լուսացել նոյեմբերի 28-ը, երբ մենք արդէն թողել էինք գիշերուայ մեր ինջևանը և առաջ էինք գնում աստիճանաբար լայնացող ձորով։ Լուսանում էր խոնաւ մռայլ օրը։

Ճանապարհի երկու կողմից Ծխախոտի ու եգիպտացորենի քաղած դաշտեր էին ձգուած, որոնց մէջ տեղ տեղ երևում էին ծառեր, որոնք ճիւղերի և տերևների փոխարէն կրում էին իրանց վերայ դիզած եգիպտացորենի չորացած ծղօտներից փափախներ։ Ճանապարհից դուրս հանդիպում էին՝ ճկուն ճիւղերը դէպ երկիր կռած լալական ուռենիները։ Անցնում էինք մահմեդականների մի գերեզմանատեղի մօտից. ցցուած քարերի արանքներից ուղղահայեաց բարձրանում էին բարակ բրգաձև գլուխներով խորհրդաւոր նոճիները (սևլի, кипарисъ), որոնք կարծես վառուած հսկայ ճրագներ լինէին դէպ երկինք ուղղած սև բոցերով։

Երթևեկների թիւը, քանի գնում, շատանում էր ցեխոտ ճանապարհին։ Ցոյն գիւղացիք՝ բարձած էշերի վերայ Ծխախոտի չորացած տերևների կապոցներ՝ քաղաքն էին դիմում, իսկ այնտեղից մեր հան-

---

[1]) Տե՛ս «Մուրճ»-ի 1889 թ. № 4, 5, 7, 9, 11, 12 և 1890 թ. № 1։

դէպ գալիս էր եւրոպական ապրանքներով բեռնաւորուած ուղտերի ահագին քարաւանը, որ հեռաւոր Պարսկաստանից բերած ասիական հում բերքերի փոխարէն այժմ տանում էր եւրոպական արդիւնահանութեան արտադրութիւնները սփռելու թմրած Արևելքի խորքերում։

Մի ժամ եւս և մենք հասնելու էինք Տրապիզոն, ուր իմ ուղեկցից պիտի բաժանուէինք։ Ճանապարհին շատ խնդիրների մասին էինք խօսել նորա հետ և այդ օր աշխատում էինք, այսպէս ասած, վերջացնել բոլոր նախկին հաշիւները։ Մեր խօսակցութիւնների մեծ մասը տաճկա-հայերի և ռուսա-հայերի դրութեան և փոխադարձ վերաբերութեան մասին էր։ Թիւրքա-հայաստանցիք մեծ համարում և յոյսեր ունէին ռուսա-հայերի նիւթական, մտաւոր և բարոյական ուժի վերայ։ Պոլսեցիներին համարում են «պմբլիկ», թեթև, «անիւթ», ինչպէս ասում էր ուղեկիցս։

Իբրև թիւրքա-հայաստանցի, այն էլ վանեցի, Մ. աղան մեծ ոգևորութեամբ էր խօսում, (Խորենացու ոճով ասենք) «բանիւք պայծառ, սիրով անկեղծաւոր, ուսուցանելով անձանձրոյթ» Հայրիկի մասին, որի քարոզների ու առակների ամեն մի խօսքը անջնջելի տպաւորուել էին նորա սրտում։ Այն դժբաղդ օրից, երբ ներսէսը «փոխեցաւ աշխարհից», անկարելի եղաւ այնուհետև նորա գաղափարակիցներին գտնել հայ ժողովրդի մէջ, Հայաստանում. «զի բարձաւ քահանայապետ, խորհրդական և ուսուցանող. վրդովեցաւ խաղաղութիւն, կայկայեցաւ տգիտութեամբ չարափառութիւն» և ցարութիւն ու Խորէն կալան զաթոռ պատրիարքութեան...

Այդ օր իմացայ Գիւմիւշհանէի մօտ պատահած դէպքի ժամանակ վանեցու երկիւղի պատճառը։ Բանը այն է, որ վանեցիք քանիցս ուղարկել են Սուլթանի անունով աղերսագիրներ, որոնց մէջ պատմում էին հայ ժողովրդի կրած անտանելի հարստահարութիւնները ու թշուառութիւնը տեղական վարչութիւնից։ Սակայն այդ գրութիւնները երբէք ուր հարկն է չէին հասնում. գոնէ հետևանքները ցոյց չէին տալիս հակառակը։ Այդ տեսնելով վանեցիք յուսահատած մտածում են ուղարկել մի աղերսագիր եւս իրանց մարդու ձեռքով, որը մի և նոյնն է Պոլիս էր գնում։ Գրութիւնը ներկայացնելով ժողովրդի անտանելի վիճակը, աղերսում էր մի ելք այդ՝ ապրելու համար այլ եւս անկարելի դրութիւնից։ Ուղեկիցս գիտէր, որ եթէ այդ դրութիւնը, չը

նայած նորա վերին աստիճանի խոնարհ և հպատակասէր բնաւորութեան, ընկնի տեղական պաշտօնեաների ձեռքը՝ բանտ ու յաւիտենական աքսորը կը լինին իրան սպառնող ամենաթեթև պատիժները։ Դեռ դրանով չէր բաւականանալ տեղական տաճիկ պաշտօնեաների վրէժխնդրութիւնը. անթիւ ձերբակալութիւններ տեղի կ'ունենային և կը ստիպէին քաղաքի «երևելիներին» ուղարկել Պոլիս մեծ գոհունակութեան, բարեմաղթութիւնների և դրատների մեծաբարբառ հաւաստիքներ։

—Կը վախնայի սաստիկ, որ զիս պիտ քննեն ու թուղթը գտնեն։ Աղէկ եղաւ, որ թոյլ չը տուիք խուզարկել ձեզի. անոնք զբաղուեցան ձեզմով զիս ալ մոռցան։ Սէմարի (գալան) մէջ պահելու էր թուղթն։ Սակայն գիտցած եղէք, էֆէնդի՛, որ մեր գրածը բացի աղաչանք պաղատանքէ, լաց ու գանգատէ, բան մը չէր պարունակիլ իւր մէջ։ Է՛հ, էլ ի՛նչ մեղադրեմ այլազգը, քանի որ մեր մեծաշուք էֆէնդիներ ու աղաներն ալ, արժանապատիւ եկեղեցականներու մեծամասնութեան հետ միասին, հեռու հայրենիքէն փափուկ ու կուշտ ապրելով՝ չեն ուզեր հասկնալ և թեթևցնել մեր վիճակ, այլ լոկ կըսեն՝ աղէկ է ձեր դրութիւն, համբերէք։

Այդ տեսակ պատգամախօսները պատրաստ կը լինէին մի մարդու, որ դիմէր նոցա՝ «եղբայրս մերձ ի մահ հիւանդ է, օգնեցէք» խօսքերով, պատասխանել. «մինաս չ'ունի, որ մերձ ի մահ հիւանդ է. այդ լաւ է, թող համբերի. ի՛նչ է, լա՞ւ կը լինի, եթէ մի քանի տարիներից յետոյ յանկարծ սաստիկ ձմեռ վրայ հասնի...»։ Հրաշալի՛ տրամաբանութիւն։ Կարծես, հիւանդի համար աւելի լաւ է հիւանդութիւնից մեռնել քան ենթադրական սառնամանիքի հանդիպել. կարծես, հիւանդը եթէ տանջւի հիւանդութիւնից՝ գալիք սառնամանիքը վրայ չի հասնիլ. կարծես, մոռանալով հիւանդին օգնել, ազատել մահից, դրանով հրաւիրում լինին սառնամանիքը բարեհաճել իրանց մօտ այցելելու. կարծես... բայց մի՞թէ հարկաւոր է շարունակել...

—Թող ձեր ռուսահայերը տեսնին իրենց աչքերով զմեր երկիր և ապա դատեն։ Ահա, ինչ որ դուք տեսաք, դա Ցաճկա-Հայաստանի ամենաբարեկարգ մասն է, զի մօտ է Կարինին, լուսաւոր երկիրներ տանող մեծ ճանապարհին. ազատ է քրդերից ու չէրքէզներից և որքան և է վերահսկողութիւն կայ. բայց Հայաստանի խորքերում՝ Երզնկա,

Դերսիմ, Զմշկածագ, Խարբերդ, Բալու, Մուշ, Բուլանըղ, և այլն, ի՛նչ թշուառութիւն կը տիրէ, հարստահարութիւններ և ոճիրներ կը կատարուին—չէք ալ կարող երևակայել ձեզ։ Հողերը, գիւղերը՝ քիւրդ և տաճիկ բէգերի կալուածներն են. հայ գիւղացիները իրանց մալով, տնով-տեղով այդ բէգերի և աղաների մարիբաներն են, ճորտերն են։ Կառավարութեան տուրքը, ըստ կարգին, գիւղացին կը տայ, բէգին և աղային հարկ էլի նոյն գիւղացին, զափթիին, միլթէզիմի և միւդիրի հաճոյքներին զոհացում տուողը՝ կրկի՛ն նոյնը։ Քիւրդը սպանի հային՝ մեղաւորը հայն է. հայը ղինքը պաշտպանելով զարնէ քիւրդին՝ մեղը իրանն է։ Այդ խուլ անկիւններում ո՛վ ի՛նչ կարող է, անում է, օրէնք ասածը է՝ «սահմանք քաջաց զէնք իւրեանց՝ որքան հատանի այնքան ունի...»

Լայնացած ձորի երկու կողմից ընթացող սարերը իջել խոնարհուել էին իրանց բարձրութիւնից՝ ահեղ Ծովին մօտենալով։ Մի բլրակ էր ինձ բաժանում Ծովից. քշելով ձիս վեր բարձրացայ և անպատմելի ուրախութեամբ տեսայ ձգուած իմ առջև ազատ ծփող լայնածաւալ ջրային տարածութիւն։ Հասկանալի էր այժմ ինձ այն ցընծութիւնը, որ տիրեց Քսենոֆոնի զինուորներին, երբ, աւելի քան երկու հազար տարի մեզնից առաջ, ձմեռը Պարսկաստանից հայրենիք վերադառնալիս, Հայաստանի բարձրաւանդակներում կրած սարսափելի նեղութիւններից յետոյ՝ տեսան նոքա, վերջապէս, իրանց առաջ Սև Ծովը։

Նոյնանման ուրախութիւն զգում էի և ես։ Ինձ թւում էր թէ ես կրկին լոյս աշխարհ դուրս եկայ մի մութ, սարսափելի բանտից, ուր ցնցոտիներ, թշուառութիւն, տանջանք և բռնութիւններ էի տեսնում։ Բարձր անմատչելի սարերը, ապառաժները և խոր ձորերը այդ բանտի պատերն էին։

Ծփում էր իմ առաջ Սև Ծովը. ուռած ալիքները խաղում էին իրանց մօր լայն գրկում։ Ափերին մօտենալով նոքա շարուում էին կարգ կարգ և վազում յարձակուում Ծովը կաշկանդող մնայլ անշարժ ափերի վերայ, բայց չը կարողանալով խորտակել այդ զօրեղ կապանքը, գոռում գոչում էին, փրփրում կատաղութիւնից և շիթեր երկինք բարձրացնում ու յետ նահանջում շառաչելով, որպէս զի նորից միանալով յետևից եկող ալիքների հետ՝ կրկին յարձակուեն ան-

մռունչ երկրի վերայ։ Եւ այսպէս աննկուն մաքառում են անվհատ խիզախ ալիքները անսիրտ ցամաքի դէմ և կամաց-կամաց դարերի ընթացքում մաշում, քերում նորա կուրծքը, յուսալով մի օր ազատուել նրանից...

Զախ, ծովի ափին, երկայն բլուրի վերայ և ստորոտում նոճիների, նարնջի ծառերի և ձիթենիների խմբերի միջից երևում էին Տրապիզոնի անշուք տները։ Նաւահանգիստում կանգնած էին մի քանի նաւեր։

Մի շարք կրպակներ և ծովի վերայ շինած գարշահոտ «տեղեր» իմաց էին տալիս, թէ քաղաքն ենք մտել։ Ցածրիկ մաքսատան մօտ դուրս եկաւ մեր առաջ մի տաճիկ պաշտօնեայ, որ պահանջեց մեզանից մեր անցաթղթերը և հրամայեց իջնել ձիերից, որպէս զի խուզարկի բեռները։ Վանեցին կոխեց ձեռը ջիբը մի քանի սև փող հանելու, իսկ ես մինչև մտածէի ինչ անել, ձիապանները խորհրդաւոր կերպով փսփսացին տաճկի ականջին.

—Ճանապարհին ոչ միւդիրին, ոչ էլ միւթեսարիֆ փաշային թոյլ տուեց էֆէնդին խուզարկել իրան, երևի...

Տգէտ պաշտօնեան յետ քաշուեց պատկառանքով և մենք շարունակեցինք մեր ճանապարհը նոյն ծովեզրեայ փողոցով։

Հասնելով մի հրապարակ՝ բաժանուեցինք վանեցուց։ Ձիապանս տարաւ ինձ քաղաքի կենդրոնում գտնուող մի հիւրանոց, որի ներքևի յարկում թէյարան-ղայվէարանն էր, իսկ վերևի՝ համարներ։ Փայտեայ սանդուղքներով փողոցից բարձրացանք վերևի յարկը։ Գարշահոտ նրբանցքի երկու կողմից դռներ էին, որոնցից մէկը բացեց իմ առաջ հայ հիւրանոցատիրոջ որդին։ Զոր ցեխից անիմանալի տախտակամածը, աղքատիկ կահ կարասիքը, դէպի փողոցը նայող ճեղքուած ապակիներով երկու պատուհանները և սպիտակած բարակ տախտակներից պատերը՝ որոնց մէջ եղած լայն ճեղքերը, կարծես, հարևան սենեակների մէջ օդափոխութիւնը դիւրացնելու նպատակով թողած լինէին՝ ցոյց էին տալիս, որ եւրոպականութիւնը դեռ քիչ է մտել այդ կեանքի մէջ։

Ժամի 4 էր, երբ ես հիւրանոցի հայ ծառայի ուղեկցութեամբ գնացի ռուսաց հիւպատոսարանը, որ գտնուում էր քաղաքիս ամենալաւ փողոցներից մինում։ Նա այնքան նեղ էր, որ եթէ մի

բեռնած էշ (կառք սովորութիւն չը կայ բանացնել) անցնելիս լինէր, պէտք է անցորդը տների պատերին կպչէր, որպէս զի ակամայ պատկառանքով ճանապարհ տար բեռնաբարձ երկայնականջին։ Ինչ ասել կ'ուզի, որ մայթեր (տրոտուար) չը կան քաղաքում։

Հիւպատոսարանը քաղաքիս ամենալաւ տներից մէկումն էր զետեղուած։

Ֆանտաստիկական գեղեցիկ հագուստով, արծաթապատ ատրճանակները ու խէնջարը լայն գօտիում խրած «կաւասը» մի ենիչերիի էր նմանում։ Նա յայտնեց իմ մասին հիւպատոսին, որ հրաւիրեց ինձ վերև իւր մօտ։ Այդ շինութեան երկրորդ յարկի եւրոպական ճաշակով շքեղ կահաւորուած սենեակներում ապրում էր հիւպատոսը իւր ընտանիքով։

Կարճ խօսակցութեան մէջ, ի միջի այլոց, ես պատմեցի հիւպատոսին Գիւմիւշհանէի մօտ ինձ հետ պատահած դէպքը։ Նա ասաց, որ երբէք միութեարիֆին «վէքիլ» չի արել, և որ տաճիկ վարչութեան վարմունքը ինձ հետ բոլորովին ապօրէն էր և ես կարող էի ոչինչ զիջումներ նրանց չ'անել։ Նա հրաւիրեց ինձ երեկոյեան իւր մօտ։

Հիւպատոսարանին կից էր Տրապիզօնի ազգային տղայոց վարժարանը։ Որովհետև մինչև երեկոյ տեղ չ'ունէի գնալու, ես լաւ համարեցի գնալ ուսումնարանը և ծանօթանալ ուսուցչական խմբի հետ։

Դասերը աւարտած էին։ Աշակերտները ցոյց տուին ո՛ր սենեակում էր գտնւում տեղիս ազգային ուսումնարանների տեսուչը՝ կովկասեցի պ. Դ. Քալանթարեանը։ Անկեղծ ուրախութեամբ ընդունեց նա ինձ, ծանօթացրեց ուսուցիչների հետ, ցոյց տուեց մի քանի դասարաններ, պատրաստականութեամբ հաղորդելով բոլոր հարկաւոր տեղեկութիւնները։

Տրապիզօնի ազգային տղայոց վարժարանը ունէր երկու բաժանմունք. ծ ա ղ կ ո ց և ու ս ու մ ն ա ր ան։ Առաջինը բաղկացած էր 3 դասարաններից, իսկ երկրորդը՝ 4։ Աշակերտների թիւը 400 էր, ուսուցիչներինը՝ 11։ «Ծաղկոցում» աւանդւում էին՝ հայոց լեզու, թւաբանութիւն, տեղական աշխարհագրութիւն, բարոյագիտութիւն, իրագիտութիւն, գեղագրութիւն, գծագրութիւն և տարրական մարմնամարզ։ Իսկ «ուսումնարանում»՝ հայերէն, ֆրանսերէն, թուր-

քերէն, ազգային և ընդհանուր պատմութիւն և աշխարհագրութիւն, թուաբանութիւն, բնական պատմութիւն, ֆիզիկա, կրօն, գեղագրութիւն, գծագրութիւն և ձայնական երաժշտութիւն։ Նորընտիր տեսուչը մտադրութիւն ունէր նոյնպէս մտցնել ցանկացողների համար արհեստներ։

Տրապիզոնի վարժարանը տաճկա-հայերի ամենալաւ ուսումնարաններից մինն է և կարող էր հեշտութեամբ ունենալ մի երկու բարձր բաժանմունք եւս վարժապետներ պատրաստելու համար և այդպիսով յայտնի չափով կը լրացնէր այն պակասը, որ ամբողջ Թիւրքիայում հայերը ոչ մի վարժապետանոց չ՝ունին։ Նամանաւանդ կարևոր կը լինէր նա այստեղ այն պատճառով, որ Տրապիզոնը և՛ մօտ է Հայաստանին և՛ ազատ է այն պայմաններից, որոնք արգելք են դնում բուն Հայաստանում մի այդպիսի հիմնարկութիւն ներկայումս։ Եւ դորա համար շատ քիչ զոհաբերութիւն է հարկաւոր, տարեկան մի 1500 բուբլի, որ կարող էին տալ կովկասեցիք։

Իմ նոր ծանօթներս առաջարկեցին ինձ միասին գնալ տեղիս «կլուբը», որը ուսումնարանից հեռու չէր։

Անցնելով եւրոպական ձևով մաքուր կահաւորուած դահլիճով, որի մէջ տեղում բիլիարդի մի մեծ սեղան էր դրած, և աչքի անցկացնելով Կովկասից ստացած թերթերը, որ երկու ամիս ձեռս չէին ընկել (այդ տեղ առաջին անգամ իմացայ «Մուրճ»-ի հրատարակութեան մասին), մենք պատուիրեցինք թէյ և առանձնացանք մի սենեակում։ Այստեղ արձակ համարձակ կարող էի խօսել՝ Կարինի բոլիսներից չը վախենալով։ Ինձ պաշարում էին հարցումներով Հայաստանից։ Տրապիզոնցիներին համարեա նոյնքան է ծանօթ Թիւրքաց-Հայաստանի վիճակը, որքան, օրինակի համար, Բաթումի հայերին։ Տրապիզոնը՝ ինչպէս և Պոլիսը, Զմիւռնիան ու Տաճկաստանի ծովեզրեայ քաղաքները, շփուելով եւրոպացիների հետ և մշտական հաղորդակցութիւն ունենալով լուսաւոր երկիրների հետ՝ ունի կեանքի բոլորովին այլ պայմաններ, քան Փոքր-Ասիայի կամ Հայաստանի կենդրոնները, որոնք համարեա բոլորովին կտրուած են լոյս աշխարհից և մատնուած միանգամայն խաւարի, կամայականութեան ու թշուառութեան։

Երեկոյեան նշանակած ժամանակին գնացի հիւպատոսի մօտ, ուր

կային և մի քանի հիւրեր, որոնց մէջ և ֆրանսիական ու պարսից հիւպատոսները։ Հիւպատոսը ինձ ծանօթացրեց իւր ամուսնու և հիւրերի հետ և մի քանի ժամանակից յետոյ բոլորս հրաժարեցանք սեղանատունը։

Եւրոպական զանազան պետութիւնների ներկայացուցիչները աշխատում են տարածել իրանց կառավարութիւնների ազդեցութիւնը Տաճկաստանում և մանաւանդ նորա ամենաընդունակ տարրերի վերայ—հայերի և յոյների... Որտեղ գէշ կայ՝ այնտեղ անգղներն են ժողովւում.... Բանը այնտեղ է հասնում, որ հանրապետական ազատամիտ Ֆրանսիան պաշտպանում է Տաճկաստանում իւր երկրից աքսորւած եզուիտներին և օգնում ամեն կերպ կաթոլիկ պրոպագանդային։ Տրապիզօնում, բացի հայ-կաթոլիկների ուսումնարաններից, որոնց թէ ֆրանսիական և թէ իտալական հիւպատոսները հովանաւորում են, կան նոյնպէս «կապուցին ֆրերների» տղայոց ուսումնարան և զուտ ֆրանսիական ու իտալական երկսեռ վարժարաններ 4 տարեայ դասընթացով։ Այդ երեք ուսումնարանում սովորում էին 210 տղայ և 110 աղջիկ, որոնցից հայերը՝ 100 տղայ և 45 աղջիկ, մնացածը յոյների և եւրոպացիների զաւակներ էին։ Իսկ հայ-կաթոլիկների դպրոցները, որոնցից տղայոցը Վենետիկի Մխիթարեաններն են պահում, իսկ աղջկանցը «Անարատ յղութեան» քոյրերը, ունէին 100 աշակերտներ և 75 աշակերտուհիներ։

Անգլիական հիւպատոսարանը հովանաւորում է հայ բողոքականների դպրոցներին, ուր անգլիական լեզուն ու ազդեցութիւնն են տիրապետում։ Նիւթական նպաստ ստացւում է Ամերիկայի «Պօրտ» ընկերութիւնից. սովորողների թիւը՝ 20 տղայ և 12 աղջիկ, 2 ուսուցիչներով։

Ի դէպս է այստեղ ասել և մի քանի խօսք թուրքերի ուսումնարանների մասին։ Տեղեկութիւնները հաղորդեց ինձ մի վստահելի և տեղեակ անձնաւորութիւն՝ պ. Պ. Մ.։

Տրապիզօնում կայ կառավարութեան կողմից 1886-ին բացած մի տղայոց «միջազգային դպրոց», որ մինչև այժմ ոչ մեկ արդիւնք չի տւած։ Թէպէտ «միջազգային» է, սակայն ոչ մի քրիստոնեայ չը մտաւ այդ տեղ։ Մախքը ծածկելու համար մի պարզ միջոց ընտրեցին,—տասանորդի տուրքի վերայ «յաւելուածմը ընել», պօլսե-

ցիների ոճով ասենք։ Աշակերտների թիւը, իմ ժամանակ, 80 էր, դասարաններինը՝ 5, ուսուցիչներինը՝ 6։ Աւանդելի առարկաներն, գոնեա թղթի վերայ, էին՝ թուրքերէն, արաբերէն, ֆարսերէն, ֆրանսերէն, թւաբանութիւն, ալգեբրա, երկրաչափութիւն, աշխարհագրութիւն, պատմութիւն, բնական պատմութիւն, երկրագործութիւն, գեղագրութիւն, գծագրութիւն։

Բացի այդ կայ կառավարական թուրք տղայոց ուսումնարան, որի ծախքը, տարեկան մօտ 2.700 ռուբլի, նոյն աղբիւրից է, 360 աշակերտներով և 6 ուսուցիչներով։ Ցայտնի անբնական մոլութիւնը, թէև սարսափելի տարածուած է բոլոր թրքական ուսումնարաններում, սակայն բոլորից գերազանցում է սորանում։

Քաղաքիս թիւրքաց լաւագոյն դպրոցը համարւում է նրանց զինուորական վարժարանը, որի ծախքը նոյն աղբիւրից է։ Դասարանների թիւը 4 է, ուսուցիչներինը՝ 11, աշակերտներինը՝ 400։ Աւանդւում են թուրքերէն, արաբերէն, ֆարսերէն, ֆրանսերէն լեզուներ, թւաբանութիւն, տարրական ալգեբրա և երկրաչափութիւն, կրօնք, գեղագրութիւն, աշխարհագրութիւն և Օսմանեան պատմութիւն։

Բացի այդ կան թաղերում՝ այսպէս անուանած՝ տարրական ուսումնարաններ (սիբեան) մի մի ուսուցիչով իւրաքանչիւրում։ Այդ ուսումնարաններում ուսումը տեւում է մի տարի. նոցա թիւը 15 էր, տղաների թիւը բոլորում ի միասին առած՝ 490։ Սովորեցնում են թուրքերէն, Ղուրան և ամենատարրական թւաբանութիւն։ Թուրքաց աղջկանց համար ուսումնարանները միմիայն այդ տիպին են պատկանում։ Ամբողջ Տրապիզօնում 3 այդ տեսակ ուսումնարան կայ՝ ընդամենը 25 աշակերտուհիներով։ Ուրեմն 21 հազար տաճիկ բնակիչներ ունեցող Տրապիզօնում միմիայն 25 թիւրք աղջիկ էր սովորում կարդալ և գրել։

Վերջապէս մէչէդների մօտ էլ կան «մէդրեսէներ», որոնց մէջ սովորողների թիւը ընդամենը 100 էր։ Ղուրան, ծէսեր, արաբերէն, թուրքերէն և գեղագրութիւն,—ահա՛ մատակարարուող գիտութիւնը այդ կրօնական ուսումնարաններում։

Այս բոլորից յետոյ մարդ ակամայ յիշում է Ռենանի «Գիտութիւն և Իսլամ» ճառից հետևեալ խօսքերը. «Մուսուլմանական երկիրների ժամանակակից թուլութիւնը ակնյայտնի է իւրաքանչիւրին՝ ով որ-

քան և է ծանօթ է գործերի դրութեան, կատարելապէս ակնյայտնի ընկածութիւնը այն տէրութիւնների, ուր տիրում է իսլամը, մտաւոր ոչնչութիւնը այն ցեղերի, որոնք պարտական են իրանց կուլտուրայով և կրթութեամբ բացառապէս այդ կրօնքին... Կարծես, մի երկաթեայ մամուլ ճնշում է իւրաքանչիւր ուղղահաւատի գլուխը և դարձնում նրան բոլորովին անընդունակ գիտութեան համար, անընդունակ մի որ և է բան ուսանելու, ըմբռնելու որ և է նոր գաղափար... Անմիտ հպարտութիւնը—իւրաքանչիւր մուսուլմանի արմատական պակասութիւնն է»։

* * *

Երեկոյեան ժամի 8-ից անց էր, երբ ես կաւասի ուղեկցութեամբ, որ լապտերը բռնած լուսաւորում էր ճանապարհը, որովհետև Տրապիզօնում փողոցներ լուսաւորելը դեռ անհրաժեշտ չի համարւում, վերադարձայ սենեակս։

Վառելով ճրագը՝ ուզում էի պատուհանների շիլա վարագոյրները իջեցնել և հէնց ձեռս տարել էի կապերը արձակելու, որ սարսափած յանկարծ տեսայ մատներիս տակ մի սև կարիճ, որ պոչը բարձրացած իւր թունաւոր խայթոցով պատրաստւում էր ինձ խայթել։ Կանչեցի ծառային, որ սպանի նրան և տեսնի արդեօք անկողնի մէջ էլ չը կան։

Մինչ ես նստած աթոռի վերայ խօսում էի այդ հայ ծառայի հետ, աննկատելի կերպով մօտեցել էր սենեակիս կիսաբաց դռան մի յաղթանդամ տաճիկ սպայ՝ կարմիր ֆէսը ծուռ դրած գլխին և ձեռները կոխած վարտիկի ջիբերը. նա կանգնած նայեց մի քանի րոպէ և յետոյ առանց թոյլտուութիւն խնդրելու յանդգնութեամբ մտաւ սենեակս և չը թողնելով իւր երեսի արհամարհական հեգնական ժպիտը՝ սկսեց ոտքից ցգլուխ ինձ չափել իւր լիրբ հայեացքներով ու հարցնել թէ ո՞րտեղացի եմ, ո՞վ եմ և ո՞ւր եմ գնալու։ Ես չը պատասխանեցի և չը շարժելով տեղիցս, զարմացած նայում էի այդ անկոչ հիւրի ձևերի վերայ։ Ստրկահոգի ծառան շողոքորթութեամբ պատասխանում էր էֆէնդիի հարցերին։

Սպան տեսնելով որ ես ոչինչ ընդդիմադրութիւն չեմ ցոյց տա-

լիս՝ կրեշչենգօ բարձրացնում էր թէ իւր ձայնը և թէ լրբութիւնը։ Նա նստեց իմ հանգէպ՝ մահճակալիս վերայ և ասաց. «Հա՛, ուրեմն դու ռուսաստանցի ես, բայց չը գիտե՞ս, որ քո առաջ սպայ է նըստած. մեզանում երբ զինուորական է մտնում՝ պէտք է վեր կենալ և ոչ թէ դեռ ոտներն էլ առջևը մեկնել. քաշի՛ր ոտներդ», բղաւեց նա խփելով իւր ոտներով իմ ոտներիս։ Ինչպէս երևում է, իմ ոտներս ծակում էին տաճիկ զինուորականների աչքերը։ Ես աշխատեցի զըսպել բարկութիւնս և ասացի ծառային. «Յայտնի՛ր այդ մարդուն թէ՝ ես պահանջում եմ, որ նա այս րոպէիս թողնի սենեակս»։

Ծառան յայտնեց նրան նոյնը աւելի մեղմացրած ձևով։

—Ձայնդ կտրի՛ր, քեաֆի՛ր, ես հրամայում եմ, անհաւա՛տ հայ, որ քաշես ոտներդ և կանգնես իմ առջևս, թէ ոչ ես քեզ ցոյց կը տամ... գորգոռում էր անզուսպ տաճիկը։

Ես ցոյց տալով դէպի դուռը և կատաղութիւնից դողդողալով ասացի.

—Դո՛ւրս. այս րոպէիս դո՛ւրս։

—Ա՛խ դու անհաւատ. է՛յ, դիմեց նա ծառային. կանչի՛ր այս տեղ Օսման էֆէնդուն.. ես այս անպիտան հային պիտի ծեծեմ։

Ահից սարսափած ծառան վազեց կանչելու սպայ Օսմանին. իսկ ես վեր կացայ տեղիցս, վերցրի թախտի վերայ գցած բեվօլվերս և ուղղելով լրբի կուրծքին՝ գոռացի.

—Դո՛ւրս...

Նա չէր սպասում հայից մի այդպիսի վարմունք, ապշած յետյետ քաշուեց. բայց տեսնելով դրան մօտ Օսմանին, կրկին սկսեց գորգոռալ...Սակայն ես արդէն զինքս կորցրել էի. կատաղի հրում էի իմ առջև խռնուած մարդկանց, որպէս զի խփեմ սպային, որի ընկերը պահում էր բեվօլվեր բռնած ձեռս, իսկ ծառան միւս ձեռից էր քաշում։ Իմ հակառակորդին փախցրին իւր համարը։

Բոլորը թափուել էին սպայի սենեակը, որ դեռ շարունակում էր գորգոռալ, բայց հիմա գանգատաւորի ձայնով. ինձ մօտ մնացել էին մի քանի հայ վաճառականներ, որոնք բնական էին գտնում տաճկի պահանջը և անխոհեմութիւն իմ կողմից ընդդիմանալը։ Երբ ես նրանց ասում էի թէ՝ հէնց իրանց այդ վախկոտ զիջողութեան հետևանքն է այդ տեսակ տաճիկների լրբութիւնը, կրկնում էին թէ՝ ի՞նչ կարող են

իրանք անել, ոչ դատաստանն է իրանց կողմը և ոչ ոյժը։ Եթէ իրանց մշտական զիջողութիւնները և ակամայ քաղցր վարուողութիւնը չը լի-նէր՝ անկարելի էր ապրել այդ երկրում։

Ծառան արդէն անհետացել էր. ես կանչում էի նրան որպէս զի ուզարկեմ հիւպատոսարանը կաւասին բերելու։ Վերջապէս նա երևաց նրբանցքի մի անկիւնից սարսափած, սպրտնած, բերանը չորացած, աչքերը չռած։ Նա ոտների մատերի վերայ էր մանգալիս և փսփսա-լով խօսում, որպէս զի սպան չ'իմանայ թէ սա ինձ օգնում է. վախե-նում էր վրէժխնդրութիւնից։ Այդ բոպէին կանչեց նրան իւր սենեակից սպան և նա իսկոյն թողեց ինձ և վազեց նորա մօտ և վերադառ-նալով ուզում էր տեղեկանալ՝ արդեօք լի՞քն էր բեվոլվերս թէ դա-տարկ։

—Կարող ես յայտնել պարոնիդ թէ այո՛, լի է 6 գնդակով և մօտս կայ. մի այլ բեվոլվեր ևս ու 200 փամփուշտ։ Այդ յայտնելուց յետոյ՝ կատարի՛ր իմ հրամանս և կանչի՛ր այստեղ կաւասին։—Նա դեռ չէր ուզում գնալ, բայց ես սպառնալով ստիպեցի։ Աննկատելի կեր-պով նա դուրս եկաւ հիւրանոցից։

Եկաւ կաւասը։ Պատմեցի եղելութիւնը, որպէս զի իմաց տայ հիւպատոսին, խոստանալով առաւօտեան ինքս աւելի մանրամասն պատմելու։ Բացի այդ, խնդրեցի կաւասին բերել այժմ և տաճիկ բո-լիսներից մէկին։

Մի քանի բոպէից յետոյ վերադարձաւ կաւասը բոլիսների մէկի հետ և յայտնեց թէ հիւպատոսը խնդրում է, որ գնամ իւր մօտ գիշերը անցկացնելու, որովհետև բան կարող է պատահել։ Ես շնոր-հակալութիւնս խնդրեցի յայտնել, ասելով որ գիշերը այստեղ կը մնամ։

Բոլիսին պատմելու համար հարկաւոր էր որ և Ծառան ներ-կայ լինէր, որովհետև նորա աչքի առջև սկսուեց այս անախորժ դէպքը, բայց նա՝ վախենալով տաճկի առջև տաճկի դէմ աննպաստ ցուցմունք անել՝ չէր գալիս։ Որպէս զի աւելի ազատ կարողանամ պատմել տաճկերէն իրողութիւնը՝ ես ստիպուած էի հարևան հայերից մէկին կանչել իբրև թարգման։ Բոլիսը աշխատում էր մեղմացնել գործը և մինչև անգամ արդարացնելով սպային, մեղադրել ինձ, ա-սելով թէ, Ծառայի խօսքերին նայած, ես առաջինը սկսեցի կռիւը։

ես պահանջեցի, որ Ծառան գայ և նոյնը ասի իմ ներկայութեամբ, բայց նա թաց էր կացել։

—Լա՛ւ, այդ վաղը կը տեսնենք, ո՛վ է մեղաւորը. իսկ հիմա նախազգուշացնում եմ ձեզ, որ եթէ այն լիրբը համարձակուեց մօտենալ սենեակիս դռան, ես առանց այլ և այլութեան արձակելու եմ բեվոլվերս նորա վերայ, պատասխանեցի ես։

Բոլորը հեռացան սենեակիցս. ես պնդացրի թոյլ կոզբուղ բարակ դուռը և երկար վրդովմունքից չէի կարողանում հանգստանալ։

* * *

Միւս առաւօտ, նոյեմբերի 29-ին, լուացում էի. իսկ երեկուայ հայ Ծառան պատմում էր, որ տաճիկ սպան շատ շուտ վեր էր կացել և առանց թէյ խմելու գնացել իւր Ծառայութեան և որ արդէն քաղաքում բոլորը խօսում են գիշերուայ դէպքի մասին, թէ ինչպէս մի ռուսահայ ուզում էր բեվոլվերով սպանել մի տաճիկ օֆիցերի։

Թէյի ժամանակ Ծառան մտաւ մօտս յայտնելով, որ Օսման էֆէնդին խնդրում է թոյլտուութիւն ինձ տեսնելու։

Ներս եկաւ երեկուայ սպան, որ կուի ժամանակ բռնել էր իմ ձեռքս։ Նա եկել էր տեղեկանալու թէ ի՞նչ եմ մտադիր անել և չէ՞ր կարելի արդեօք ազատել իւր ընկերին։ Նա սկսեց նրանից, որ ներողութիւն խնդրեց իւր ընկերոջ համար, առարկելով թէ նա թէյի հետ երևի քիչ ռոմ էր խմել և քէֆով էր եղել և հէնց է իմացել թէ մի հասարակ հայ էք։

—Հէնց հասարակ հայ էլ կամ. այնու ամենայնիւ այդ իրաւունք չէր տալիս ինձ հետ այնպէս վարուելու. ինձ համար մի և նոյն է՝ ձեր ընկերը ռոմ էր խմել թէ կօնեակ։ Ես մինչև բաւականութիւն չը ստանամ չեմ թողնելու այդ գործը, պատասխանեցի ես։

Օսմանը դուրս եկաւ շատ քաղաքավարի կերպով գլուխ տալով։ Մի քանի րոպէից յետոյ կրկին մտաւ Ծառան, ասելով թէ մի տաճիկ ուզում է ձեզ տեսնել։ Թոյլ տուի զալ։ Մտաւ մի երիտասարդ բաշ-բօլիս, քաղցր շողոքորթ ժպիտը երեսին, քաղաքավարութեամբ և յարգանքով գլուխ տուեց և սկսեց բարձր ոճով արտա-

յայտել իւր խորին ցաւակցութիւնը երեկուայ անախորժ դէպքի համար։

—Եթէ ես գիտենայի, որ մի այդպիսի թանկագին հիւր էիջել այս համարներում, մի՞թէ ես կը հեռանայի գիշերը հիւրանոցի մօտից, մի՞թէ թոյլ կը տայի, որ նրան մէկը վիրաւորի, և այլ այսպիսի գեղեցիկ խօսքեր էր ասում։

Դորա փորացաւը այն էր, որ վախենում էր, եթէ ես խնդիրը հիւպատոսարանի միջոցով բարձրացնեմ, ինքս ինքը ևս, իբրև այդ թաղի հանգստութեան վերահսկող։ Այդ պատճառով հարցնում էր թէ ի՞նչ եմ մտադիր անելու և ո՞ւմ գանգատուելու։ Տաճիկը միայն վախենում է օտարահպատակի հետ գործ ունենալուց։

Սա էլ հեռացաւ և սենեակս մտաւ հիւրանոցատիրոջ որդին, որ ներողութիւն էր խնդրում կատարածի համար և ասում էր, թէ ահա մի ամիս է որ այն սպան ուտում է, խմում և ոչինչ չի վճարում, իսկ գանգատուել՝ ուր հարկն է՝ վախենում են։

Թէյից յետոյ գնացի հիւպատոսարանը։ Հիւպատոսը, լսելով մանրամասն բոլոր եղելութիւնը յայտնեց, որ երկու միջոց կայ խնդիրը բարձրացնելու. կամ հրապարակական դատ սկսել, որ շատ ժամանակ կը խլի և մեծ աղմուկ կը հանի, կամ գանգատուել սպայի անմիջական իշխանութեան՝ տեղիս գեներալ-փաշային։ Ես ընտրեցի երկրորդը և հիւպատոսարանի հայ թարգմանի հետ դիմեցի ծովափին գտնուող զինուորական շինութիւնը։

Դեռ փաշան չէր եկել. ցած շինութեան առջև կանգնած էր պահապանը և մի քանի սպաներ։ Փողոցի ծայրին ահա երևաց մի հաստափոր զինուորական, որը սիգաճեմ քայլուածքով մօտենում էր շինութեան։ Նորա յետևից խոնարհաբար հետևում էր սեազգեստ ծառան։ Զինուորական փողը հնչեց և ողջոյնը տուին։ Թարգմանը մօտեցաւ նրան և յայտնեց թէ խնդիրք ունինք։ Նա հրաւիրեց հետևել իրան։ Մտանք մի մեծ սրահ՝ եւրոպական ձևով աղքատ կահաւորուած. փաշան իւր սուրը հանեց և տուեց իւր օգնականին և գնացինք սրահին կից սենեակը, որի մեծ պատուհանները նայում էին ուղիղ ծովի վերայ։ Ինքը նստեց մի ցածր աթոռի վերայ, որին կպած մի փոքրիկ սեղան էր շինած և մեզ ցոյց տուեց իւր հանդէպ գտնուող թախտը։ Հրամայեց մի մի ֆինջան ղահվէ բերել և առաջարկեց ծխել։

Իւր օգնականի մատուցած մի քանի հեռագիրներ ու թղթերը կարդալուց յետոյ, նա դիմեց մեզ իմանալու մեր այցելութեան պատճառը։

Թարգմանը պատմեց մանրամասն բոլոր եղելութիւնը և վերջը աւելացրեց, թէ ռուսաց կոնսուլը խնդրում է լուրջ ուշադրութիւն այս գործի վերայ և խիստ պատիժ մեղաւորին։ Նա տաճկական շողոքորթութեամբ պատասխանեց թէ կոնսուլի խնդիրքը իւր համար հրաման է և թէ կարող ենք վստահ լինել, որ ամենախիստ կերպով կը պատժուի մեղաւորը և ապա դիմեց իւր օգնականին յայտնելով մեղաւոր օֆիցերի մասին։ Օգնականը ուղեց օֆիցերին պաշտպանել ասելով, թէ այն օֆիցերը, որի մասին մենք գանգատւում ենք, ամբողջ գիշերը չի հեռացել զօրանոցից։ Ես ասացի, որ նա առաւօտ կանուխ է վերադարձել զօրանոցը։ Փաշան մեզ յայտնեց, որ հիմա նա կը կանչի օֆիցերին, իբրև թէ յանձնարարութեան համար, և երբ նա հեռանայ՝ ես յետոյ ասեմ արդեօք դա՞ էր։

Օֆիցերը մտաւ. տեսնելով ինձ թարգմանի հետ, այլայլուեց ու սպրտնեց և ստանալով փաշայից թղթերը՝ հեռացաւ։

Ես յայտնեցի որ հէնց դա ինքն էր երեկուայ հերոսը և աւելացրի, թէ այն կարճ ժամանակամիջոցում որ ես անցկացրի Տաճկաստանի ամենաբարեկարգ անկիւններից մէկում, այս առաջին դէպքը չէ որ պատահում է հետս։ Ի՞նչ կարծիք կարող են օտարականները կազմել Տաճկաստանի մասին, երբ նոքա անգամ՝ չը նայած իրանց հիւպատոսարանների հեղինակութեան՝ ենթարկւում են այդ տեսակ վիրաւորանքների։

—Ամեն երկրում լինում են վատ մարդիկ, էֆէնդիմ, պատասխանեց փաշան և խոստանալով խստութեամբ պատժել յանցաւորին, շատ քաղաքավարի կերպով ճանապարհ դրեց մեզ, խնդրելով թարգմանին հանգստացնել հիւպատոսին։

Տեղը չէր, ի հարկէ, ապացուցանելու, որ այն դէպքերը որ ինձ հետ պատահեցին, և այն երևոյթները որ ամեն քայլափոխում մարդ նկատում է այդ երկրում՝ մասնաւոր չեն։ Մարդկանց բարոյական գծերը և հասարակական ձգտումների զարգացումն էլ նոյն փակտորների ազդեցութեան են ենթարկւում, որոնց և օրգանիզմների ձևերի զարգացումը, ինչպէս ուսուցանում է այդ էվոլիւցիայի օրէնքը։

Այդ երեք գործոններն են՝ միջնավայրը, ժառանգականութիւնը և ընտրողականութիւնը (selection)։ Տաճկին շրջապատող ընտանեկան-հասարակական միջնավայրը, նորա միջին-ասիական նախահայրերից ժառանգածը և այդ երկրում ներկայ պայմաններում գոյութեան կռուի մէջ առաւելութիւն ունենալու (ընտրողականութիւն) համար հարկաւոր յատկութիւնները՝ կոպիտ ոյժը, մահմեդական ծագումը, ստոր տեսակի խորամանկութիւնը և այլն՝ չեն նպաստում, որ այդ երկրում երևան գան առաքինի լուսաւոր անձնաւորութիւններ, մուտք գործէ աղատ, բարեկարգ կեանքը...

Կէսօրին գնացել էի տեղիս լաւ ճաշարաններից մէկը։ Այդ օրւայ խօսակցութեան նիւթը բոլորի մօտ՝ գիշերս պատահած դէպքն էր։ Տեղիս հայերը և յոյները չէին կարողանում ծածկել իրանց զարմանքը, որ քրիստոնեան կարող է իւր պատիւը պաշտպանելու համար զէնք բարձրացնել տաճիկ օֆիցերի դէմ։

Ես ցանկանում էի տեսնել և տեղիս հայոց աղջկանց վարժարանը, որ զետեղւած էր Գ. եպիս. Սրուանձտեանի հեռացնելուց թափուր մնացած առաջնորդարանի ընդարձակ շինութեան մէջ։ Երբ պ. տեսուչ Դ. Քալանթարեանի հետ մտանք ուսումնարանը, նարնջի և ձիթենի ծառերով պատած ընդարձակ մաքուր բակում խաղում էին վայելուչ հագուած աշակերտուհիներ։

Ներկայ գտնուեցայ մի քանի դասերին։ Նատ բաւարար տպաւորութիւն էր թողնում վարժարանը. նա նմանում էր ռուսա-հայերիս համեմատաբար բարեկարգ ուսումնարաններին։ Աղջկանց վարժարանն էլ, ինչպէս որ տղայոցը, բաժանւում էր երկու մասի՝ «ծաղկոց» և «ուսումնարան». ծրագիրը համարեա նոյն էր։ Ծաղկոցը երկու դասարաններ ունէր, իսկ ուսումնարանը՝ 4։ Աշակերտուհիների թիւը՝ 251 էր։

Այս երկու ազգային վարժարանների վերայ լինում էր տարեկան ծախք 600 օսմ. լիրա (5.500 ր.), որը մատակարարւում էր՝ ազգային սնդուկից (150 ոսկի), ծնողների վճարներից (350 ոսկի) և վիճակահանութիւնից ու հանդէսներից (100 ոսկի) ստացւած գումարներով։

Տրապիզօնում կային և հայոց մի քանի մասնաւոր մանկական դպրոցներ, մօտ 200 երեխաներով։ Այնպէս որ ամբողջ քաղաքում

սովորող հայ մանկտւոյ թիւը հասնում էր 1.200-ի, որ համեմատած հայ բնակիչների թւի հետ՝ 6.000, բաւականին մեծ է՝ 20%, մինչդեռ թիւրքերի մօտ՝ սովորողների թիւը 1.450, իսկ բնակիչներինը 21.000, այսինքն 6%։ Տրապիզօնում յոյների թիւը 10.000 է հաշւում, բայց տեղեկութիւններ սովորողների մասին չը կարողացայ ձեռք բերել։

Նոյեմբերի 30-ին, երեկոյեան ժամի 8½-ին, Տրապիզօնից Բաթում պէտք է գնար աւստրիական «Apis» շոգենաւը։ Միւս օր, առաւօտեան, նա Բաթում կը հասնէր։ Ես վերցրի տոմսակ։

Երեկոյեան ժամի 5-ն էր, երբ ես պ. Բալանթարեանի և երկու ուսուցիչների հետ դիմում էինք նաւահանգիստը։ Ձիապան Սիմոնը, որ չէր գնացել գիւղը որպէս զի ինձ ճանապարհ գցի, մի մշակի հետ իրերս էին տանում։ Մեզ պաշարել էին ցնցոտիներով ծածկւած մուրացկան երեխաներ և աղիողորմ ճչալով ողորմութիւն էին պահանջում։

Մովափին շատ քիչ ժողովուրդ կար։ Մի խումբ մուրացկաններ, որոնց մէջ և չարսաւներում փաթաթւած տաճիկ կանայք, շրջապատել էին ինձ. մինը փէշիցս էր քաշում, միւսը թևքերիցս, երրորդը օձիքիցս և բոլորը ողորմութիւն էին խնդրում, որպէս զի ինձ բարի ճանապարհ մաղթեն։

Ափին շինւած էր մի փոքրիկ փայտեայ պահանոցանոց (будка), ուր նստած էր մի պաշտօնեայ. մի այլ տաճիկ, որը և ափին կանգնած երկու-երեք մակոյկների տէրն էր, վերցրեց անցաթուղթս, տարաւ նշանակել տւեց և մի քանի ղուրուշ «բախշիշ» վերցնելով որպէս զի իրերս չը խուզարկի, հրաւիրեց մեզ իւր մակոյկը, ինքն էլ նստեց մեզ հետ և հրամայեց թիավարին մղել, շարժւել տեղից։

Խազազ, պարզ երեկոյ էր. երգելով սլանում էինք կապուտակ ալիքների վրայով դէպի վիթխարի «Apis»-ը, որ կանգնած էր հեռւում։ Ահա և նորա կողքին իջեցրած երկաթեայ սանդուղքները. մենք վեր ելանք և մտանք նաւասենեակը։

Ժամանակ էր արդէն սանդուղքները բարձրացնելու, և ինձ ճանապարհ գցող բարեկամներս բաժանւելով ինձնից՝ նստան մակոյկը։ Նոքա արդէն հեռացել էին այնքան, որ հազիւ էին նշմարւում. բայց ես դեռ կանգնած էի և նայում նոցա կողմը։

Արեգակը մայր էր մտել։ Եղանակը սկսում էր վատանալ։ Որորները (чайка) անհանգիստ ճչալով և ցած ճախրելով դէս ու դէն էին թռչում։ Ցուրտ քամին սաստկանում էր. մէգը թանձրանում։

Մթնել էր բոլորովին։ Քաղաքի տներում վառուած ճրագների լոյսը աղօտ թափանցում էր մառախուղի միջից։ Նաւաձաձկի մի սասում, վրանաձև քաշած կտաւի տակ մի կերպ յարմարել էին հայ և յոյն պանդուխտները, որոնցից մի քանիսը իրանց ընտանիքներով էին։ Ունևոր ճանապարհորդները փակւել էին յարմար, տաք, լուսաւոր սենեակներում։

Արդէն ժամի 9-ն էր։ Անձրևը սաստկանում էր. քամին խփելով կայմերին սուլում, շառաչում։ Սիրտս չէր տալիս իջնել ներքև։ Ահա նաւապետը նշան տուեց. նաւաստիները այս կողմ ու այն կողմ վազվըզեցին. խփեցին զանգը. բարձրացրին խարիսխը. սուլեց և շարժւեց տեղիցը վիթխարի «Apis»-ը պատառելով և յետ մղելով ընդդիմադրող ալիքները։ Հեռանում ենք Տաճկաստանից. ծովափը և ճրագները կամաց կամաց ընկղմւում են գիշերային մթութեան մէջ. տես՝ մարեց և վերջին ճրագը. մեր շուրջը այլ ևս ոչինչ, բացի ալէկոծւող անեզր ծովից և մութ-կապարագոյն երկնքից։ Ցուրտ է և տխուր....